ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ա. Անտանտի երկրների բանակցությունները Կիլիկիայի պատկանելության խնդրի շուրջ. Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո Անտանտի երկրները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան) քննարկում էին Օսմանյան կայսրության բաժանման հարցը: Նրանց ուշադրության կենտրոնում էին նաեւ հայկական տարածքները՝ Արեւմտյան Հայաստանը եւ Կիլիկիան: Եթե Արեւմտյան Հայաստանի նկատմամբ հավակնություններ ուներ Ռուսաստանը, ապա Կիլիկիայի հարցում մեծ շահագրգռվածություն էր ցույց տալիս Ֆրանսիան:

Միջերկրականի հյուսիսարեւելյան ափին գտնվող Կիլիկիայով էր անցնում ռազմավարական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող Բեռլին-Բաղդադ երկաթուղին, այն ռազմական ու տնտեսական առումով ուներ հարմար նավահանգիստներ (Ալեքսանդրետ, Մերսին), հարուստ էր հանածոներով, գյուղատնտեսության զարգացման համար ուներ բոլոր բարենպաստ պայմանները, այնտեղ արտադրվող բամբակը կարող էր բավարարել Ֆրանսիայի թեթեւ արդյունաբերության ամբողջ պահանջարկը:

1914 թ. նոյեմբերի 16-21-ը տեղի ունեցած բանակցություններում ռուսական կողմը Ֆրանսիային առաջարկեց Կիլիկիան, Սիրիան, Պաղեստինը եւ Հռենոսի մարզը, որի դիմաց վերջինս ճանաչելու էր Ռուսաստանի իրավունքները Կ. Պոլսում, նեղուցներում եւ Արեւմտյան Հայաստանում[1]: Նոյեմբերի 21-ին Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մորիս Պալեոլոգը Նիկոլայ Բ. կայսրին տեղեկացրեց Սիրիան ու Պաղեստինը գրավելու Ֆրանսիայի ցանկության մասին[2]: Այսպիսով, Անտանտի դեմ Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո Ֆրանսիան դաշնակիցներին տեղեկացրեց Կիլիկիայի նկատմամբ ունեցած հավակնությունների մասին:

---

1 Տե՛ս **J. Smith**, *Great Britain and the 1914-1915 Straits Agreement with Russia:* The British Promise of November 1914, "The American Historical Review", Vol. 70, թ. 4, Jul., 1965, էջ 1032:

2 Տե՛ս **М. Палеолог**, Царская Россия во время мировой войны. М., 1991, էջ 128:

1915 թ. հունվարի 16-ին Փարիզում ռուսական դեսպան Ալեքսանդր Իզվոլսկին տեղեկացրեց Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Սազոնովին, որ Ֆրանսիայի ԱԳ նախարար Թեոֆիլ Դելկասեն իրեն իրազեկել է, որ սիրիական ափից բացի Ֆրանսիան ցանկանում է գրավել նաեւ Ալեքսանդրետը[3]: Դա պայմանավորված էր նրանով, որ բրիտանացիները որոշակի հավակնություններ ունեին Ալեքսանդրետի նկատմամբ, իսկ Ռուսաստանում քննարկվում էր Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի վրայով Միջերկրական դուրս գալու տարբերակը:

1915 թ. փետրվարի 19-ին՝ Դարդանելի օպերացիայի հենց առաջին օրը, Սազոնովը դաշնակիցներից պահանջեց, որ հաջողության հասնելու դեպքում Կ. Պոլիսն ու նեղուցներն անպայման հանձնեն Ռուսաստանին: Փետրվարի վերջին Մեծ Բրիտանիան նեղուցները Ռուսաստանին հանձնելու համաձայնություն տվեց, բայց միայն պատերազմից հետո, եթե վերջինս խոստանար բրիտանա-ֆրանսիական կողմին բաժին հանել ասիական Թուրքիայի հետպատերազմյան ժառանգությունից[4]:

Մարտի 1-ին Պալեոլոգը Սազոնովին տեղեկացրեց, որ Ֆրանսիան ցանկանում է գրավել Սիրիան, Ալեքսանդրետը, Կիլիկիան՝ մինչեւ Տավրոսի լեռնաշղթան[5]: Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Անատոլի Ներատովը այդ առթիվ Սազոնովին առաջարկում էր ֆրանսիացիներին տեղեկացնել, որ հայերը, որոնցից կազմված է Կիլիկիայի բնակչությունը, նույնպես որոշակի ձգտումներ ունեն այդ երկրամասի նկատմամբ, եւ նրա մտցնելը ֆրանսիական գոտու մեջ կարող է հայերի մեջ հիասթափություն առաջացնել: Միաժամանակ անհրաժեշտ էր համարում նշել, որ եթե Ֆրանսիան անպայման ցանկանում է տիրել այդ երկրամասին, ապա իրենք արգելք չեն լինի[6]:

Մարտի 17-ին Ռուսաստանի կայսր Նիկոլայ Բ. պատրաստակամություն հայտնեց ճանաչել բրիտանացիների հավակնությունները Մերձավոր Արեւելքում եւ Ֆրանսիայի իրավունքները Սիրիայում ու Կիլիկիայում[7]:

Մարտի 20-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Թեոֆիլ Դելկասեն Լոնդոնի ու Հռոմի ֆրանսիական դեսպանատներին ուղարկած հուշագրում տեղեկացնում էր, որ Օսմանյան կայսրության բաժանման դեպքում իրենց պետք է

3 Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան եւ Անտանտան». «Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից», առաջաբանը՝ Աշոտ Հովհաննիսյանի, Երեւան, 1926, էջ 3 (այսուհետ՝ «Հայաստանի ավտոնոմիան...»):

4 Տե՛ս "Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел". Под редакцией Е. А. Адамова, Москва, 1924, էջ 118-119:

5 Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, Հայկական հարցը եւ մեծ տերությունները 1914-1917թթ., Երեւան, 2002, էջ 84:

6 Տե՛ս «Հայաստանի ավտոնոմիան...», էջ 8-9:

7 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Առաջաբանը Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վ. Պողոսյանը, հ. Ա., Երեւան, 2005, էջ 246:

անցնեն Հալեպի, Ադանայի, Խարբերդի եւ Դիարբեքիրի նահանգները, որով իրենց վերահսկողության տակ կանցներ Կոնիայից դեպի Միջագետք գնացող Բաղդադի երկաթուղին[8]: Փաստորեն, ֆրանսիացիներն արդեն հավակնում էին նաեւ Խարբերդին ու Դիարբեքիրին:

Մարտի 28-ին Ֆրանսիան, հաշվի առնելով, որ Ռուսաստանը ճանաչել է իր իրավունքները Սիրիայում եւ Կիլիկիայում, համաձայնություն տվեց նեղուցներում ռուսական ձգտումներին[9]:

Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Իտալիայի մերձավորարեւելյան ձգտումներին բավարարություն տալու նպատակով նրանց միջեւ 1915 թ. մայիսի 9-ին ստորագրվեց Լոնդոնի գաղտնի համաձայնագիրը[10]: Դրանով որոշ չափով հստակեցվեցին այդ չորս տերությունների հավակնությունները օսմանյան ժառանգության բաժանման հարցում:

ա) Ռուսաստանին էին անցնելու Կ. Պոլիսը, նեղուցները եւ շրջակա որոշ տարածքներ, Արեւմտյան Հայաստանի մի մասը՝ Վան, Բիթլիս, Էրզրում, Տրապիզոն:

բ) Ֆրանսիան ստանալու էր Սիրիան եւ Կիլիկիան:

գ) Մեծ Բրիտանիայի ազդեցության տակ էին անցնում արաբական տարածքները:

դ) Գաղտնի համաձայնագրի 9-րդ հոդվածով Իտալիան Փոքր Ասիայում ստանալու էր Ադալիա նահանգը՝ հարակից տարածքներով:

Պետք է նշել, որ այս համաձայնագիրը ամբողջությամբ չբավարարեց այդ տերությունների ախորժակը, որը հետզհետե ավելի էր մեծանում: Շուտով Կիլիկիայի նկատմամբ որոշակի նկրտումներ ցուցաբերեց նաեւ Իտալիան, որը ձգտում էր ավելի մեծացնել Փոքր Ասիայի՝ Միջերկրականին հարող իր տիրույթները: Ֆրանսիան նույնպես, շատ չանցած, ավելի ընդարձակ տարածքների սկսեց հավակնել: Այդ ամենը հանգեցրեց նոր համաձայնագրերի ստորագրմանը 1916-1917 թթ.:

Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալը Դարրիոն 1915 թ. հոկտեմբերի 2-ին Ֆրանսիայի ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած զեկուցագրում մտավախություն էր հայտնում, որ բրիտանացիներն աչք ունեն Ալեքսանդրետի ու Սիրիայի վրա: Նա անհրաժեշտ էր համարում, որ Փարիզն ու Լոնդոնը վերջնական համաձայնություն կայացնեն Սիրիան ֆրանսիական ազդեցութ-

8 Տե՛ս **E. Fitzgerald**, *France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918,* "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 66, թ. 4, Dec., 1994, էջ 703:

9 Տե՛ս **R. Kerner**, *Russia, the Straits, and Constantinople, 1914-1915,* "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 1, թ. 3, Sept., 1929, էջ 414:

10 Տե՛ս *Documents on British Foreign Policy 1919-1939.* Edited by Woodward and Rohan Butler. First series, vol. I, London, 1947, էջ 84-85:

յան գոտի ճանաչելու հարցում, իսկ այնտեղ ծավալվելիք ռազմական գործողությունների հրամանատարությունը իրականացնեն ֆրանսիացիները: Նաեւ առաջարկում էր այնպես անել, որ հայերը չընկնեն բրիտանացիների ազդեցության տակ[11]:

Ռուսաստանը նույնպես ամբողջությամբ չէր հրաժարվել Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի վրայով Միջերկրական դուրս գալու գաղափարից: Այդ հնարավորությունը պարզելու խնդիրը ռուսական դիվանագիտությունը դրեց հայ գործիչների վրա: Հայերը ձգտում էին Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի միավորմամբ ստեղծել միացյալ եւ ինքնավար Հայաստան Անտանտի պետությունների հովանու ներքո: Ռուսաստանը պատրաստակամություն հայտնեց հրաժարվել իրեն անցնելիք հայկական տարածքներից, եթե Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան համաձայնեին միացյալ Հայաստանի ստեղծմանը՝ այդ երեք տերությունների միացյալ վերահսկողության տակ: Ռուսները վստահ էին, որ այդ դեպքում հաջողությամբ կկարողանան իրենց ազդեցությանը ենթարկել Հայաստանը եւ կապվել Միջերկրականին: Այդ հարցում դաշնակիցների տրամադրությունները պարզելու եւ նրանց համոզելու գործը ռուսական իշխանությունները թողեցին հայ գործիչների ուսերին[12]:

Պետք է նշել, որ Մեծ Բրիտանիան նույնպես որոշակի հավակնություններ ուներ Կիլիկիայի նկատմամբ: Նա ամբողջ Կիլիկիային տիրելու համար չէր պատրաստվում հակամարտության մեջ մտնել Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ռուսաստանի հետ, սակայն հնարավորության դեպքում ցանկանում էր տիրել ռազմավարական եւ տնտեսական մեծ կարեւորություն ունեցող Ալեքսանդրետի նավահանգստին: Այն Բաղդադի երկաթուղագծին կապված ամենամոտ եւ հարմարավետ նավահանգիստն էր Միջերկրականի արեւելքում: Սեւծովյան նեղուցների վրա ռուսական տիրապետության հաստատման դեպքում բրիտանական կողմը Սուեզի ջրանցքի եւ Կիպրոսի պաշտպանության համար Միջերկրականի արեւելքում կարիք կունենար ավելի մեծ թվով ռազմանավեր տեղակայելու: Բրիտանիայի ԱԳ նախարար Էդուարդ Գրեյը, ռազմական նախարար Հենրի Քիթչենը, քաղաքական ու ռազմական գործիչների զգալի մասը ռազմաբազայի համար լավագույն նավահանգիստ էին համարում Ալեքսանդրետը[13]:

Կիլիկիայի նկատմամբ հավակնություններ ունեին նաեւ արաբները: Մեքքայի շերիֆ Հուսեինը 1915 թ. հուլիսին բրիտանացիների հետ գաղտնի բանակցություններում նրանց աջակցելու եւ թուրքերի դեմ ապստամբելու դիմաց պահանջեց պատերազմից հետո ստեղծել Արաբական թագավորություն, որը ներառելու էր Արաբական թերակղզին, Միջագետքը, Պաղեստինը, Սի-

11 **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 199-203:
12 ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 9:
13 Տե՛ս **J. Smith**, *Great Britain and the 1914-1915 Straits Agreement with Russia,* էջ 1028:

րիան եւ Կիլիկիան՝ Մերսինով ու Ադանայով[14]: Հոկտեմբերի 24-ին Եգիպտոսում բրիտանական զորքերի հրամանատար Հենրի Մակմահոնը Հուսեինին տեղեկացրեց, որ Մերսինը, Ադանան եւ Սիրիայի արեւմտյան որոշ շրջաններ չեն կարող համարվել արաբական, իսկ մյուս տարածքների նկատմամբ բրիտանական կառավարությունն ընդունում է արաբների պահանջները եւ իր ազդեցության գոտում գտնվող տարածքներում պատրաստ է տրամադրել անկախություն: Նոյեմբերի 5-ին Հուսեինը պատասխանեց, որ պատրաստ է հրաժարվել Ադանայից ու Մերսինից, բայց դրա փոխարեն այլ տարածքներ պետք է տրվեն, հատկապես՝ Բեյրութը[15]:

Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ Օսմանյան կայսրության անդամահատման հարցում վերջնական համաձայնություն կայացնելու բարդ խնդիրը հանձնարարվեց բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսին եւ ֆրանսիական գործիչ Ֆրենսիս Ժորժ Պիկոյին, որը նախկինում եղել էր Բեյրութի ֆրանսիական հյուպատոս: Սայքսը բազմիցս ճանապարհորդել էր Օսմանյան կայսրությունում, այդ թվում՝ Հայաստանում եւ Կիլիկիայում, համարվում էր մերձավորարեւելյան հարցերի գիտակներից մեկը, եւ նրա կարծիքը հաշվի էին առնում բրիտանական եւ նույնիսկ ֆրանսիական իշխանությունները: 1915 թ. նոյեմբերին նրանք բանակցություններն սկսեցին Լոնդոնում: Ի վերջո, այդ գործիչները համատեղ գծեցին այն սահմանները, որով բաժանվելու էին արաբական, հայկական եւ քրդական տարածքները:

1915 թ. նոյեմբերի 2-ին Պիկոյին փոխանցված հրահանգներում Ֆրանսիայի վարչապետ եւ ԱԳ նախարար Արիստիդ Բրիանը պահանջում էր բանակցությունների միջոցով ապահովել Ֆրանսիայի վերահսկողության տակ Մեծ Սիրիայի ստեղծումը: Ըստ դրա՝ Սիրիային հարավում միացվելու էր Պաղեստինը, իսկ հյուսիսում՝ Կիլիկիան, Խարբերդը, Դիրարբեքիրը, Վանը, Մոսուլը[16]: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիայի տարածքային հավակնությունները Հայաստանում բավական ընդարձակվել էին: Արդեն խոսքը ոչ միայն Կիլիկիային էր վերաբերում, այլեւ՝ հարավային Հայաստանին:

Սայքսի առջեւ խնդիր էր դրված օսմանյան կործանվող կայսրության փոխարեն նոր պատնեշ ստեղծել՝ դեպի հարավ ռուսական առաջխաղացման դեմ:

Բանակցություններն սկսվեցին նոյեմբերի 23-ին: Նախնական համաձայնությունը կայացվեց արդեն 1916 թ. հունվարի 3-ին[17]: Հունվարի 4-ին Բրիանը Ֆրանսիայի խորհրդարանում հայտարարեց, որ Բրիտանիան ճանաչել է իրենց իրավունքներն Ալեքսանդրետում, Կիլիկիայում, Մոսուլում[18]:

---

14 Տե՛ս *"Memories of a Turkish statesman, 1913-1919"*, By Djemal Pasha, New York, 1922, էջ 209:
15 Անդ, էջ 210:
16 Տե՛ս **E. Fitzgerald**, *France's Middle Eastern Ambitions,* էջ 709:
17 Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 93:
18 Տե՛ս **Հ. Գանգրունի**, Կիլիկիոյ հայութեան վերջին գաղթը (1920-1921), Պէյրութ, 1998, էջ 11-12:

Փաստորեն, Սայքսը եւ Պիկոն կազմեցին Օսմանյան կայսրության անդամահատման նախագիծ, որը դեռ պետք է արժանանար ռուսական իշխանությունների հավանությանը:

1916 թ. մարտի 10-ին Պետրոգրադում Սայքսին եւ Պիկոյին բրիտանական ու ֆրանսիական դեսպաններ Ջորջ Բյուքենենը եւ Մորիս Պալեոլոգը ներկայացրին Սազոնովին, որպեսզի քննարկեն Օսմանյան կայսրության տարածքների բաժանման հարցը: Երկու բանագնացներին ներկայացնելուց հետո դեսպանները հեռացան: Սայքսը եւ Պիկոն Սազոնովին ներկայացրին լոնդոնյան բանակցությունների արդյունքները եւ դրանց հիման վրա կազմած սահմանների քարտեզը[19]:

Ըստ դրա՝

ա) Ռուսաստանին էր անցնելու «Դեղին» գոտին՝ Կ. Պոլիսը, նեղուցները, Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգները:

բ) Ֆրանսիան ստանալու էր «Կապույտ» գոտին՝ Լիբանանը, Սիրիայի արեւմտյան շրջանները, Կիլիկիան, Այնթապը, Ուրֆան, Խարբերդի ու Դիարբեքիրի նահանգները, Հաքիարի մարզը: Ֆրանսիական ազդեցության գոտի էր ճանաչվում «A» գոտին՝ Սիրիայի արեւելքը եւ Մոսուլի շրջանը: Ալեքսանդրետը ստանալու էր ազատ նավահանգստի կարգավիճակ, որպեսզի բրիտանացիներն ազատորեն օգտվեին դրանից:

գ) Բրիտանիան ստանալու էր «Կարմիր» գոտին՝ Միջագետքը, Պարսից ծոցի առափնյա շրջանը, Հայֆա եւ Աքրա նավահանգիստները: Բրիտանական ազդեցության գոտի էր ճանաչվելու «B» գոտին՝ Բաղդադի նահանգի հյուսիսը եւ Անդրհորդանանը: Հայֆան ստանալու էր ազատ նավահանգստի կարգավիճակ, որպեսզի ֆրանսիացիներն ազատորեն օգտվեին դրանից:

դ) «Շագանակագույն» գոտում ընդգրկված Պաղեստինում նախատեսվում էր միջազգային կառավարում մտցնել:

Նրանց սահմանագծումը չափազանց զարմացրեց Սազոնովին, քանի որ դրանով ֆրանսիական ազդեցության գոտին հասնում էր մինչեւ Պարսկաստան: Նախարարը նշեց, որ այդ ձեւաչափով համաձայնագիրն անհնար է ընդունել, եւ ինքը դեռ պետք է հարցը քննարկի համապատասխան մարմինների հետ[20]: Նախկին բանակցություններում եւ զրույցներում Ֆրանսիան ցանկություն էր հայտնել ստանալ Կիլիկիան եւ Սիրիան: Հետեւաբար, Սազոնովի համար նորություն էր, որ ֆրանսիացիներն աչք էին դրել նաեւ հարավային Հայաստանի եւ Քրդստանի վրա:

---

19 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երեւան, 1972, էջ 381-384 (այսուհետ՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության»):

20 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 265-268:

Արեւմտյան Հայաստանը, փաստորեն, բաժանվելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջեւ: Հավանաբար, բրիտանական դիվանագիտության առաջարկած ծուղակներից էր այն, որ հարավային Հայաստանը եւ Քրդստանը առաջարկվում էին Ֆրանսիային, որի սահմանները պետք է հասնեին մինչեւ ռուս-պարսկական սահմանը: Փաստորեն, ռուսների առաջխաղացումը դեպի ավելի հարավ բրիտանական կողմը փորձում էր այս անգամ կանխել Ֆրանսիայի միջոցով, որը պետք է փոխարիներ կործանված օսմանյան պատնեշին: Կիլիկիան, Խարբերդը, Դիարբեքիրը եւ Քրդստանը հյուսիսում Տավրոսի լեռնաշղթայով սահմանակից էին դառնալու ռուսական տարածքներին, իսկ հարավում ունենալով Կիլիկիան ու Սիրիան՝ Ֆրանսիան կարող էր ամուր պատնեշ ստեղծել ռուսների հետագա առաջխաղացման դեմ դեպի Մերձավոր Արեւելք, Եգիպտոս եւ Միջերկրականի արեւելյան ափը: Իսկ բրիտանական տիրույթները ձգվում էին ֆրանսիականից հարավ՝ թիկունքում:

Ինչպես տեսնում ենք, բրիտանական կողմը գտել էր այն լուծումը, թե ինչպես պատնեշի ռուսական առաջխաղացումը դեպի Միջերկրական եւ Սուեզի անցուղի: Հետեւաբար, այլեւս կարիք չկար պահպանելու Օսմանյան կայսրությունը, որի համար հսկայական ջանքեր էր գործադրել բրիտանական դիվանագիտությունը, քանի որ այդ փլուզվող պետության գոյության միակ իմաստը վերջին հարյուրամյակում եղել էր ռուսներին հարավ չթողնելը:

Մարտի 11-ին Սայքսը ռուսական կողմին ներկայացրեց նոր սահմանագծում, որը կարող էր բավարարել Սազոնովի ցանկությունները: Դրանով Հաքիարին եւ Բիթլիսի անցուղիները թողնվում էին Ռուսաստանին, իսկ Ֆրանսիայի ազդեցության գոտում ընդգրկվում էր նաեւ Փոքր Հայքը՝ Սեբաստիայի նահանգը[21]: Փաստորեն՝ հիմնականում քրդերով ու ասորիներով բնակեցված Հաքիարին հանձնում էին Ռուսաստանին, իսկ դրա փոխարեն Ֆրանսիան ստանալու էր Սեբաստիայի նահանգը: Այդ քայլով փակում էին Ռուսաստանի հետագա առաջխաղացումը արեւմուտք՝ Փոքր Ասիա:

Ապրիլի 26-ին Սազոնովի եւ Պալեոլոգի միջեւ փոխանակված հուշագրերով ստորագրվեց ռուս-ֆրանսիական համաձայնագիր, որով Ռուսաստանը իր համաձայնությունը հայտնեց Օսմանյան կայսրության բաժանման ֆրանս-բրիտանական նախագծին[22]: Մայիսի 9-ին եւ 16-ին Է. Գրեյի եւ Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի միջեւ փոխանակված հուշագրերով ստորագրվեց Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը[23]:

1916 թ. սեպտեմբերին Իտալիայի ԱԳ նախարար Սիդնի Սոննինոն տեղեկացավ Սայքս-Պիկոյի համաձայնագրի մասին: Դա նրան խիստ բարկացրեց, քանի որ դաշնակիցներն Իտալիայի թիկունքում գաղտնի համաձայնագիր

21 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության...», էջ 384-385:
22 Անդ, էջ 391-395:
23 Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 97:

էին կնքել: Նա պահանջեց Իտալիայի հետ համաձայնեցնել համաձայնագրի կետերը:

1917 թ. հունվարի 29-ին Մեծ Բրիտանիայի նոր ԱԳ նախարար Արթուր Բալֆուրը Իտալիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի դեսպանների հետ Լոնդոնում քննարկեց իտալական պահանջները: Պարզվեց, որ Իտալիան, բացի Ադալիայից, ցանկանում է իր տիրույթներին միացնել նաեւ Այդինի եւ Ադանայի նահանգները՝ վերահսկողության տակ վերցնելով Կոնիա-Ադանա-Մերսին երկաթուղին: Կիլիկիայի հյուսիսային մասը պատրաստ էր թողնել Ֆրանսիային[24]:

Ինչպես տեսանք, Կիլիկիան Լոնդոնի եւ Սայքս-Պիկոյի համաձայնագրերով պետք է անցներ Ֆրանսիային, հետեւաբար՝ իտալական ձգտումները հակասության մեջ էին մտնում նախորդ պայմանագրերի հետ: Փաստորեն, Կիլիկիան կռվախնձոր դարձավ ֆրանս-իտալական հարաբերություններում:

Փետրվարի 12-ին գումարվեց երկրորդ նիստը: Բալֆուրը իտալական դեսպան մարկիզ Գուլիելմո Իմպերիալիին հիշեցրեց, որ Իտալիան Լոնդոնի համաձայնագրով պարտավորվել է հարգել դաշնակիցների պայմանավորվածությունները, եւ առաջարկեց ստանալ Այդինը, իսկ Կիլիկիայում ճանաչել Ֆրանսիայի իրավունքները: Սակայն դեսպանը կտրականապես առարկեց ցանկացած որոշման դեմ, որը Ադանան եւ Մերսինի նավահանգիստը չէր ներառի իտալական ազդեցության գոտու մեջ: Դրանով լոնդոնյան բանակցությունները կանգնեցին փակուղու առաջ եւ ձախողվեցին[25]:

Ապրիլի 19-ին Սեն Ժան դե Մորիենում կայացած հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի վարչապետներ Դեյվիդ Լլոյդ Ջորջը եւ Ալեքսանդր Ռիբոն, ի վերջո, համաձայնության եզրեր գտան Սոննինոյի հետ: Որոշվեց պատերազմից հետո Իտալիային հանձնել Փոքր Ասիայի հարավարեւմտյան տարածքները՝ Իզմիրի, Այդինի եւ Ադալիայի նահանգները՝ մինչեւ Ադանայի նահանգի սահմանը: Վերջինս անցնելու էր Ֆրանսիային: Ռիբոն համաձայնեց Իտալիային թողնել նաեւ Ադանայի նահանգի՝ Մերսինից արեւմուտք ընկած տարածքները՝ չնայած Սայքս-Պիկոյի համաձայնագրով դրանք անցնելու էին Ֆրանսիային[26]:

Մ. Անդերսոնն այդ գործարքի մասին նշում է. *«Ըստ էության սա մի փորձ էր Կիլիկիայից շեղելու իտալական ծավալապաշտությունը, որտեղ այն սուր կերպով բախվում էր Ֆրանսիայի շահերին, եւ բավարարելու այն Արեւմտյան Փոքր Ասիայում»*[27]:

---

24 Տե՛ս **P. Helmreich**, *Italy and the Anglo-French Repudiation of the 1917 St. Jean de Maurienne Agreement,* "The Journal of Modern History", Vol. 48, No. 2, Jun., 1976, էջ 104-106:

25 Անդ, էջ 107:

26 Տե՛ս անդ, էջ 108:

27 Տե՛ս **Ռ. Գասպարյան**, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երեւան, 2005, էջ 146:

Ինչպես տեսնում ենք, 1914-1917 թթ. Անտանտի տերությունները քննարկում էին պատերազմի հաղթական ավարտից հետո Կիլիկիայի պատկանելության հարցը: Երկար քննարկումներից, բանակցություններից ու վեճերից հետո դաշնակիցները Սայքս-Պիկոյի ու Սեն Ժան դե Մորիենի համաձայնագրերով ճանաչեցին Ֆրանսիայի իրավունքները Կիլիկիայում:

Բ. Ֆրանսիայի դիրքորոշումը Կիլիկիայում ափհանում իրականացնելու հարցում. Համաշխարհային պատերազմի տարիներին Կիլիկիայում զորքերի ափհանում իրականացնելու եւ ռազմական գործողություններ ծավալելու նախաձեռնությամբ հանդես եկան Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Հարցը քննարկվել է նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կառավարություններում: Սակայն խնդրին տարբեր պատճառներով լուծում չի տրվել, առաջին հերթին ֆրանսիական իշխանությունների առաջ քաշած խոչընդոտների հետեւանքով:

1915 թ. հունվարին Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար Քիթչենը եւ Եգիպտոսում բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելը հակվել էին Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելու գաղափարին: Նրանք փորձեցին այդ հարցում համաձայնության գալ ֆրանսիացիների հետ: Սակայն ֆրանսիական պետական գործիչները մտավախություն ունեին, որ Մեծ Բրիտանիան ձգտում է Ալեքսանդրետը գրավել եւ պահել: Դրան հակազդելու համար անհրաժեշտ էին համարում, որ այդ տարածաշրջանում առանց ֆրանսիական զորքերի մասնակցության որեւէ ռազմական գործողությունները չիրականացվեր: Իսկ ֆրանսիական զորքեր Արեւելքում գրեթե չկային: Ֆրանսիացիները խանդով ու անհանգստությամբ էին արձագանքում նույնիսկ, երբ բրիտանական ռազմանավերը մոտենում էին Ալեքսանդրետին: Դա էր պատճառը, որ ֆրանսիական ականակիր նավ ուղարկվեց Սիրիայի մոտ[28]: Երկար քննարկումներից հետո բրիտանական իշխանությունները որոշեցին ափհանում կատարել Դարդանելում, եւ Կիլիկիան անուշադրության մատնվեց: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որը ծանր հետեւանքներ ունեցավ բրիտանացիների եւ արեւմտահայերի համար:

Դարդանելի ռազմագործողության ընթացքում ավելի քան կես միլիոնանոց բրիտանա-ֆրանսիական ուժերն անհաջողության մատնվեցին եւ կորցրին մի քանի հարյուր հազար զինվոր: Իսկ Կիլիկիայում կարող էին հաջողության հասնել՝ մի քանի անգամ ավելի փոքրաթիվ ուժեր ուղարկելով եւ, բնականաբար, աննշան կորուստներով:

28 *"Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918"*, Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, էջ 85:

Ալեքսանդրետում ափիանում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ռազմագիտական հիմնավորումներով 1915 թ. օգոստոսին Ֆրանսիայի կառավարությանը դիմեց նաեւ ֆրանսիական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Մորիս Սարրան: Բայց այդ նախագծի դեմ հանդես եկան ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար Ժոզեֆ Ժոֆրը, վարչապետ Ռենե Վիվիանը, ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը[29]: Ժոֆրը անձնական հատուկ հակակրանք ուներ Սարրայի նկատմամբ, որը նույնպես ազդեցություն ունեցավ որոշման կայացման գործում[30]:

Սեպտեմբերի 22-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Դարրիոն ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած ընդարձակ զեկուցագրում նկարագրում էր Միջերկրականի արեւելյան ափին իրենց համար ստեղծված բարենպաստ իրավիճակը եւ առաջարկում էր դիմել վճռական գործողությունների[31]: Նա արդյունավետ էր համարում ափիանում կատարելը Ալեքսանդրետի ծոցի խորքում՝ Իսոսի դաշտում, ուր կարող էին գրավել Թոփրակկալեի երկաթուղային հանգույցը եւ Տավրոսից Պոզանտ տանող ելքերը: Դրանից հետո ծովային ու ցամաքային զորքերը համատեղ գործողություններով կարող էին հեշտությամբ շարժվել դեպի հարավ եւ ազատագրել Սիրիան: Այդ պահին Սիրիայում թուրքական բանակն ուներ ընդամենը 20.000 զինվոր, եւ հաջողության հասնելու համար իրենց բավարար կլիներ ընդամենը մեկ բանակային կորպուս: Ծովակալի կարծիքով՝ այդ գործողությունը կլիներ չափազանց արդյունավետ, իսկ թուրքերը ստիպված կլինեին Դարդանելի ճակատից որոշ ուժեր տեղափոխել դեպի Սիրիա, միաժամանակ դրա ազդեցությամբ կմեծանար դասալքությունը թուրքական բանակում: Դարրիոն գտնում էր, որ, եթե Ֆրանսիան ի վիճակի չլինի պահանջվող քանակի զորք ուղարկել, ապա պետք է զինել թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված տեղական բնակչությանը: Նա խնդրում էր, որ որպես առաջին քայլ, իրեն տրամադրեն 800 հրացան եւ զինամթերք՝ մուսալեռցիներին զինելու համար: *«Այս ձեւով զինված ու լավ մարզված մարտունակ հայերը կարճ ժամանակում վեր կածվեն ահարկու ուժի, որը խիստ կարգապահության վարժվելուն պես, հնարավոր կլինի մոտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձեւով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործողության»*[32],- մատնանշում էր փոխծովակալը: Նա նախատեսում էր զինել ինչպես Անտիոքի շրջանի հայերին, այնպես էլ լիբանանցիներին: Դարրիոն պահանջում էր տրամադրել 20 000 հրացան ու ռազմամթերք այդ հա-

29 Տե՛ս **Ե. Գասպարյան**, նշվ. աշխ., էջ 48-49:
30 Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Maurice_Sarrail
31 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ.,էջ 170-176:
32 Անդ, էջ 176:

մընդհանուր ապստամբությունը սկսելու եւ հաղթական ավարտի հասցնելու համար:

Հոկտեմբերի 1-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Ալեքսանդր Դեֆրանսը Դելկասեին ուղարկած զեկուցագրում լիովին հավանություն էր տալիս Դարրիոյի ծրագրին, հաստատում էր, որ Սիրիայում թուրքերը շատ փոքրաթիվ ուժեր ունեն, որոնք բարոյալքված վիճակում են: Սակայն նա դեմ էր տեղական ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին, չնայած դա համարում էր իրագործելի: Նա գտնում էր, որ եթե առանց Ֆրանսիայի ղեկավարության ու գործուն մասնակցության թուրքերը վտարվեն Սիրիայից, ապա իրենք հետագայում ստիպված կլինեն այդ երկրամասը կրկին գրավել այնտեղ անիշխանությունը վերացնելու եւ թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Իսկ մուսալեռցիներից կազմված զորամասը, գտնում էր, որ պետք է միայն օգտագործել թուրքական ափերում դիվերսիաներ կազմակերպելու համար, որից հետո պետք է այն հետ վերադառնար: Նա լավագույն տարբերակ էր համարում ֆրանսիական ռազմարշավի կազմակերպումը եւ Սիրիայի գրավումը[33]:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի դիվանագետը դեմ էր առանց ֆրանսիական բանակի միջամտության Սիրիայի եւ Կիլիկիայի գրավմանը, քանի որ հետագայում կարող էին բարդություններ ծագել, երբ այդ տարածքները փորձեին ֆրանսիական գաղութի վերածել: Նա նույնիսկ դեմ էր փոքրաթիվ հայկական ուժերին այդ տարածքներում մշտական ռազմական գործողությունների ուղարկելու մտքին՝ վախենալով, որ հայկական ապստամբական հաջող շարժումը հիմքեր կստեղծեր հայկական ինքնավարության համար:

Իր զեկուցագրի վերջում Դեֆրանսը բերում է այդ հարցի շուրջ Մաքսվելի կարծիքը: Վերջինս Եգիպտոսի դեմ հարձակման վտանգը վերացնելու համար գտնում էր, որ *«հարկ է գործել Ալեքսանդրետի տարածաշրջանում: Բայց ֆրանսիացիներն ազատ ուժեր չունեն այդ վայրերում գործողություն իրականացնելու համար, իսկ մենք չենք համարձակվում գնալ այնտեղ՝ ֆրանսիացիներին տհաճություն չպատճառելու համար»*[34]:

Նոյեմբերին Քիթչենները կրկին բարձրացրեց Կիլիկիայում դաշնակից զորքերի ափհանում իրականացնելու հարցը: Դա պայմանավորված էր Դարդանելի օպերացիայի ձախողումով, եւ դաշնակիցներին անհրաժեշտ էր որեւէ ձեւով վերականգնել իրենց հեղինակությունն Արեւելքում: Բրիտանական կառավարությունը դիմեց Ֆրանսիային՝ խնդրի շուրջ նրա կարծիքը իմանալու համար: Նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի կառավարությունը խորհրդակցություն հրավիրեց Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողությունների

33 Տե՛ս անդ, էջ 194-196:
34 Անդ, էջ 196:

հարցը քննարկելու նպատակով: Սակայն քննարկման արդյունքում որոշվեց, որ տվյալ պահին ձեռնտու չէ Կիլիկիայում ափհանում կատարելը, եւ այդ մասին տեղեկացրին բրիտանական կառավարությանը[35]:

Նոյեմբերի 15-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը Բրիանին ուղարկած հեռագրով տեղեկացրեց, որ Ալեքսանդրետում դեսանտ իջեցնելու՝ լորդ Քիթչեների ծրագրի մասին զրուցել է Գրեյի հետ: Վերջինս այդ ռազմագործողությունը բավական դժվար իրականանալի էր համարել՝ հաշվի առնելով բրիտանական զորքերի ցրվածությունը տարբեր ճակատներում՝ Բալկաններում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Դարդանելում: Գրեյը նշել էր, որ այդ հարցը քննարկելու են կառավարությունը եւ ռազմական իշխանությունները, սակայն, նրա կարծիքով, դրան դեմ կլինեին գլխավոր շտաբում ու ծովակալությունում[36]:

Ֆրանսիացիների կողմից Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու ծրագիրը չընդունելը Քիթչեներին բավական վրդովեցրեց: Նա այդ քայլը մեկնաբանեց իբրեւ քաղաքական դիտավորություն: Այդ տպավորությունը մեղմելու համար Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Ժոզեֆ Գալիենին փորձեց համոզել, որ իրենք միայն ռազմական նկատառումներով են հրաժարվում այդ նախագծից, նույնիսկ նշում էր, որ բրիտանացիներն ազատ են իրենց հայեցողությամբ գործելու Ալեքսանդրետի շրջանում[37]:

Դեկտեմբերի 4-6-ը Ֆանսիայի Շանտիլյե քաղաքում տեղի ունեցավ դաշնակից երկրների գլխավոր հրամանատարների եւ բանակների ներկայացուցիչների համաժողով: Քննարկվեց դաշնակիցների կողմից հակառակորդին միաժամանակյա եւ համաձայնեցված հարվածներ հասցնելու հարցը, սակայն ընդհանուր եզրակացութեան չեկան[38]: Բրիտանացիները ցանկանում էին Սալոնիկը հանձնել եւ զորքերը տեղափոխել Սիրիա, Եգիպտոս կամ Ֆրանսիա: Ռուսական կողմը գտնում էր, որ Սալոնիկը պետք է պահել եւ աջակցել սերբական բանակի մնացորդների ամրապնդմանը այնտեղ[39]: Այստեղ Ֆրանսիայի ճնշման տակ վերջնականապես որոշվեց հրաժարվել Կիլիկիայում ափհանում կատարելու Քիթչեների ծրագրից[40]: 1916 թ. փետրվարի 15-ին Շանտիլյեում՝ դաշնակիցների շտաբների խորհրդաժողովում, որոշվեց Սալոնիկը պահել եւ ուժեղացնել այնտեղի բանակը[41]:

35 Տե՛ս **Ե. Գասպարյան**, նշվ. աշխ., էջ 49:
36 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 230:
37 Անդ, էջ 231:
38 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 7-10:
39 Անդ, թ. 1:
40 Տե՛ս **Ե. Գասպարյան**, նշվ. աշխ., էջ 53:
41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 39:

Այդ շրջանում ֆրանսիացիները բավարար ուժեր չունեին Կիլիկիա ուղարկելու համար: Փաստորեն, Ալեքսանդրետի օպերացիայում հիմնական դերակատարությունը ստանձնելու էին բրիտանացիները, եւ Ֆրանսիան վախենում էր, որ կարող է կորցնել Կիլիկիան, եթե այն գրավվի ոչ իր զորքերի կողմից: Թե որքան արդյունավետ կլիներ Կիլիկիայում կատարելիք ափհանումը, կարելի է եզրակացնել՝ ծանոթանալով գերմանական գլխավոր շտաբի պետ, մարշալ Պաուլ Հինդենբուրգի տեսակետին, որն իր զարմանքն էր հայտնում, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան չօգտվեցին այդ անպաշտպան օղակից եւ շարքից չհանեցին Գերմանիայի դաշնակից Թուրքիային: *«Այսպես վարվելու դեպքում,*- նշում է ֆելդմարշալը,- *նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանստավրոսյան երակը, որի վրայով թուրքական ուժերը հանդերձանքն ու սպառազինությունները ուղարկվում էին Միրիա, Միջագետք եւ մասամբ Կովկասյան բանակներին»*[42]*:* Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը եւս վախենում էր, որ հակառակորդները կարող էին բացահայտել թուրքերի *«թույլությունն այդ կրիտիկական կետում»*[43]*:*

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայում ափհանում կատարելու եւ այնտեղ հաջող ռազմական գործողություններ ծավալելու հնարավորությունը Անտանտի երկրները բաց թողեցին: Դա պայմանավորված էր Մերձավոր Արեւելքում բրիտանա-ֆրանսիական գաղտնի մրցակցությամբ: Ֆրանսիական գործիչները ցանկանում էին պատերազմից հետո Կիլիկիան միացնել իրենց գաղութներին, սակայն այդ պահին Արեւելքում բավարար զորքեր չունեին այդ երկրամասը գրավելու համար: Ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում բրիտանական ու հայկական ուժերով Կիլիկիան ազատագրելու ծրագրերին՝ վախենալով, որ կարող են այն կորցնել:

1916 թ. ապրիլի սկզբին ռուսական կառավարությունը բրիտանական կառավարությանը տեղեկացրեց, որ թուրքերը մեծ ուժեր են կուտակում Արեւմտյան Հայաստանում, եւ պահանջեցին Ալեքսանդրետում կազմակերպել ուշադրությունը շեղող գործողություն, որպեսզի թուրքերն իրենց զորքերի մի մասն ուղարկեն այդ ուղղությամբ: Կովկասյան բանակների հրամանատար մեծ դուքս Նիկոլայ Ռոմանովը երկյուղ ուներ, որ հակառակ դեպքում իր զորքերը չեն կարողանա պահել գրաված տարածքները[44]:

Ապրիլի 6-ին Փարիզում ռուսական դեսպանատունը պաշտոնապես դիմեց նաեւ Ֆրանսիայի կառավարությանը: Նշվում էր, որ Սազոնովը հեռագրել է ռուսական գլխավոր շտաբի պետ, գեներալ Միխայիլ Ալեքսեեւի կարծիքի

---

42 **Ջ. Կիրակոսյան**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 2, Երեւան, 1983, էջ 68:

43 Անդ:

44 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., էջ 281:

մասին, ըստ որի՝ Փոքր Ասիայում Ռուսաստանի ձեռք բերած հաջողությունները պահպանելու համար անհրաժեշտ է թուրքերին թույլ չտալ այդ ուղղությամբ կուտակել խոշոր ուժեր: Ռուսական հրամանատարությունն առաջարկում էր Սալոնիկում կամ Եգիպտոսում գտնվող դաշնակիցների զորքերի մի մասով ափհանում կատարել Ալեքսանդրետում կամ Յումուրթալիքում: Ըստ Ալեքսեեի՝ այդ գործողությունը վնաս չէր պատճառի վերոնշյալ ռազմաճակատներին, քանի որ սերբական բանակն արդեն տեղափոխվել էր բալկանյան թատերաբեմ, իսկ թուրքերը հրաժարվել էին եգիպտական ռազմարշավից: Սազոնովը Լոնդոնի ու Փարիզի ռուսական դեսպաններից պահանջում էր ամենայն լրջությամբ դաշնակից կառավարությունների ուշադրությունը հրավիրել այդ կարեւորագույն նախագծի վրա, որը չափազանց շահավետ էր Անտանտի երկրների համար[45]:

Սակայն ապրիլի 7-ին Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Պիեր Ռոքին ուղարկած հեռագրում Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ դը Լա Պանուսը հայտնում էր, որ Ալեքսանդրետում նոր ճակատ բացելու հարցի շուրջ զրուցել է լորդ Քիթչենների հետ, որը տեղեկացրել էր, որ իրենց զորքերի սակավության պատճառով նման գործողություն իրականացնելն անհնար է: Քիթչենների կարծիքով՝ զորքերի ցրումը տվյալ պահին սխալ կլիներ, քանի որ արեւմտյան ռազմաճակատում թեժ մարտեր էին ընթանում, եւ անհրաժեշտ էր դաշնակցային բոլոր բանակների առավելագույն համախմբում[46]: Ինչպես տեսնում ենք, Քիթչենները այս շրջանում արդեն դեմ էր Կիլիկիայում ափհանում կատարելուն:

Ֆրանսիական իշխանությունները եւս գտնում էին, որ նոր ճակատի բացումը կթուլացնի արեւմտյան ռազմաճակատը, որտեղ վճռվելու էր պատերազմի բախտը: Իսկ բրիտանական իշխանությունները համոզված էին, որ 1916 թ. ամռանը թուրքերը Հայաստանում կկարողանային կենտրոնացնել ամենաշատը 200-250 000 զինվոր, որոնց դիմադրելու համար ռուսներն ունեին բավարար ուժեր, իսկ տեղի ռելիեֆը նպաստավոր էր պաշտպանություն կազմակերպելու համար[47]:

Այս հարցի շուրջ բրիտանական ու ֆրանսիական իշխանություններին իր տեսակետը ներկայացրեց նաեւ Մարկ Սայքսը: Նա Ռուսաստանից նոր էր վերադարձել, ուր Պիկոյի հետ ռուսական կառավարությանն էին ներկայացրել Մերձավոր Արեւելքը ազդեցության գոտիների բաժանելու՝ բրիտանական եւ ֆրանսիական կառավարությունների նախագիծը: Նա Պետրոգրադից մեկնել էր Կովկաս, 4-5 օր մնացել էր մեծ դուքս Նիկոլայ Նիկոլաեւիչի շտաբում: Նա համամիտ էր մեծ իշխան Նիկոլայի ու Ալեքսեեի առաջարկներին,

45 Տե՛ս անդ, էջ 281-282:
46 Տե՛ս անդ, էջ 283:
47 Անդ, էջ 288:

գտնում էր, որ Ալեքսանդրետում ափիանումը թուրքերին կստիպի զորքերի մի մասն ուղարկել այդ ուղղությամբ, եւ նրանք չեն կարողանա ռուսների դեմ գերակշռող ուժեր կենտրոնացնել Հայաստանում: Նրան մտահոգում էր այն, որ մինչեւ հոկտեմբեր Ալեքսանդրետում ափիանում չէին կարողանա իրականացնել, եւ առաջարկում էր Եգիպտոսից հարձակվել Պաղեստինի ուղղությամբ: Սայքսը համոզված էր, որ Կովկասում ռուսների պարտությունը չափազանց ծանր հետեւանքներ կունենար Ռուսաստանի ներքին դրության համար, որը գտնվում էր վատթար վիճակում[48]: Նա զգուշացնում էր, որ ռուսական բանակի պարտությունը կարող է հանգեցնել խմորումների, *«որոնք առանց դժվարության կվերածեն հեղափոխության»*[49]:

Բրիանը Սայքսի առաջարկները ներկայացրեց նաեւ ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար գեներալ Ժոֆրի ուշադրությանը: Սակայն վերջինս համոզված էր, որ բրիտանացիներն ի վիճակի չեն լինի ամռանը ռազմական գործողություններ կազմակերպել Սինայի թերակղզում, քանի որ չունեն բավարար թվով փոխադրամիջոցներ: Գեներալի կարծիքով՝ Պաղեստինի ուղղությամբ հաջողության հասնելու համար բրիտանացիները պետք է ամռանն անապատային տեղանքում կառուցեին 140 կմ երկարությամբ երկաթգիծ, որն անհնար էր իրականացնել: Իսկ ապրիլի սկզբին Կիլիկիայի երկաթուղիների վրա Պորտ Սայիդի հայերի ուժերով հարձակումներ կազմակերպելու ծրագրից, գեներալը հիշեցնում էր, որ հրաժարվել էին Եգիպտահայ թեմի առաջնորդի պահանջով, որպեսզի խուսափեին հայկական նոր ջարդերից: Ժոֆրը գտնում էր, որ Փոքր Ասիայի ափերի մոտ պետք է սահմանափակվեն միայն ծովային գործողություններով, իսկ եթե այնուամենայնիվ որոշվեր ափիանում կատարել, ապա դա պետք է գործադրվեր դաշնակիցների զորքերի միջոցով, որոնց միացվելու էին նաեւ հայկական ջոկատները[50]:

1916 թ. Կիլիկիայում ափիանում կատարելու՝ դաշնակիցների նախագծերը այդպես էլ կյանքի չկոչվեցին: Դրանք հանդիպեցին ռազմական, քաղաքական օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարբեր խոչընդոտների: Հաջորդ տարի Կիլիկիայում ափիանման բավական հետաքրքիր նախագիծ քննարկեցին ֆրանսիացիները: Առաջարկը եկավ հեռավոր Տոկիոյից:

1917 թ. մարտի 16-ին Տոկիոյում Ֆրանսիայի ռազմական կցորդ Բոնեֆոն դը Լապոմարեդի հետ զրույցում Ճապոնիայի գլխավոր շտաբի պետ գեներալ Յուսակու Ուեհարան առաջ քաշեց Թուրքիայի դեմ Եգիպտոսի, Միջագետքի եւ Կովկասի ճակատներից լայնածավալ հարձակում սկսելու առաջարկ: Նա խոստացավ նաեւ ճապոնական զորքեր ուղարկել այդ գործողությունը հաջողությամբ ավարտելու համար: Հարցի շուրջ ֆրանսիական բանակի

48 Տե՛ս անդ, էջ 287-288:
49 Անդ, էջ 294:
50 Տե՛ս անդ, էջ 294-295:

շտաբի 3-րդ բաժանմունքի՝ հուլիսի 6-ի գաղտնի զեկուցագրում ճապոնական առաջարկն ուշադրության արժանի էր համարվում[51]: Սակայն զեկուցագրում անհնար էր համարվում հարձակումը Հայաստանում, քանի որ հաղորդակցության դժվարությունները պատճառաբանելով՝ ռուսական զորքերը երկար ժամանակ է՝ հարձակման եռանդ չէին դրսեւորում: Միաժամանակ, ռուսական երկաթուղին ծանրաբեռնվածության հետեւանքով ի վիճակի չէր ճապոնական զորքեր տեղափոխել Հայաստան: Պաղեստինում նույնպես ճապոնական զորքերի աջակցությունը անարդյունավետ էր համարվում, քանի որ այնտեղ բրիտանական մեծաքանակ զորքեր կային, սակայն լավ ամրացված ռազմաճակատի գիծը հաղթահարել չէին կարողանում: Միջագետքում նույնպես անարդյունավետ էր համարվում ճապոնական ներկայությունը, քանի որ անապատային տարածքները շատ էին, միաժամանակ, այդտեղ նույնիսկ հաջողության հասնելու դեպքում թուրքերին լուրջ հարված չէին հասցնի: Փաստորեն, ճապոնական զորքեր Հայաստան ուղարկելը անհնար էր, իսկ Պաղեստին ու Միջագետք՝ անարդյունավետ:

Լավագույն տարբերակ էր համարվում Ալեքսանդրետի նավահանգստի, Դաշտային Կիլիկիայի, Տավրոսի ու Ամանոսի կիրճերի գրավումը: Դրանով դաշնակիցների ձեռքը կանցներ Բաղդադի երկաթուղու մի մասը, որով կարգելափակվեր Միջագետքի, Պաղեստինի, որոշ չափով նաեւ Հայաստանի թուրքական բանակների մատակարարումը: Թուրքիան ստիպված կլիներ անձնատուր լինել կամ պաշտպանության գծերը տեղափոխել Անատոլիա, քանի որ Սիրիան ու Միջագետքը դրանից հետո հեշտությամբ կգրավվեին: Կիլիկիայում անհրաժեշտ էր համարվում ափ հանել ճապոնական 4-5 դիվիզիա՝ 80-100 000 զինվորներ, որոնց կարող էին հետագայում միանալ 2-3 նոր դիվիզիաներ՝ 40-50 000 զինվորներով: Առաջին զորախումբը կարող էին Ճապոնիայից չորս ու կես ամսում տեղափոխել Եգիպտոս եւ այնտեղից արագորեն ափհանում կատարել Կիլիկիայում: Երկրորդ զորախումբը տեղ կհասներ ափհանումից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Թուրքերը Կիլիկիայում կարող էին ճապոնացիների դեմ դուրս բերել 4 դիվիզիա, որոնք բավական հյուծված էին: Օժանդակ 5 դիվիզիա կարող էին ստանալ Անատոլիայից միայն 2,5 ամիս հետո, եւրոպական ճակատից կարող էին լավագույն դեպքում փոխադրել 5 դիվիզիա՝ 5-5,5 ամիս հետո: Բանակի շտաբի եզրակացության մեջ ճապոնական ներխուժումը Կիլիկիա համարվում էր ցանկալի եւ օգտակար:

Սակայն ճապոնական զորքերով Կիլիկիան գրավելու նախագիծը նույնպես ինչ-ինչ պատճառներով կյանքի չի կոչվել:

---

51 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Առաջաբանը Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վ. Պողոսյանը, հ. Բ., Երեւան, 2005, էջ 9-13:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Կիլիկիայում ափհանում կատարելու բազմաթիվ նախագծեր են առաջ քաշվել Առաջին աշխարհամարտի տարիներին, սակայն դրանք մնացել են թղթի վրա, քանի որ ֆրանսիական իշխանությունների կողմից հանդիպել են ընդդիմության կամ բավարար ուշադրության չեն արժանացել: Ֆրանսիան խանդով էր վերաբերվում դաշնակիցների ուժերով Կիլիկիան գրավելու գաղափարին եւ ամեն կերպ խոչընդոտում էր դրան: Սակայն սեփական ուժերով ֆրանսիացիները Կիլիկիան գրավել չէին կարող, քանի որ արեւելքում միայն փոքրաթիվ զորքեր ունեին:

Գ. Արեւելյան լեգեոնի կազմավորումը. Կիլիկիայում հնարավորության դեպքում ափհանում կատարելու ժամանակ սեփական ռազմական ներկայությունն ապահովելու նպատակով Ֆրանսիան ձեռնամուխ եղավ Արեւելյան լեգեոնի կազմավորմանը: Դեռեւս 1915 թ.-ից քննարկվում էր Կիպրոսում հայկական կամավորական բանակ կազմավորելու խնդիրը: Հարցն ավելի եռանդով սկսեց քննարկվել, երբ Մուսա լեռան հերոսամարտից հետո սուետիահայերը ֆրանսիական նավերով տեղափոխվեցին Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաք: Մուսալեռցիները բազմիցս դիմեցին ֆրանսիացիներին ու բրիտանացիներին, որպեսզի իրենց կամավորագրեն, մարզեն եւ ուղարկեն կռվելու Կիլիկիայում: Երկարատեւ քննարկումներից հետո ֆրանսիական իշխանությունները որոշեցին Կիպրոսում կազմավորել Արեւելյան լեգեոնը, որի մեջ ընդգրկվելու էին հայ եւ սիրիացի կամավորներ:

Հայկական զորամասի հարցը տեղում պարզելու եւ գործնական հողի վրա դնելու նպատակով փոխգնդապետ Էդուարդ Բրեմոնը 1916 թ. սեպտեմբերին Ալեքսանդրիայում բանակցություններ սկսեց եգիպտահայ ազգային գործիչներ Միհրան Տամատյանի եւ Լեւոն Մկրտիչյանի հետ: Նա տեղեկացրեց, որ Ֆրանսիան որոշել է հայկական զորամաս ստեղծել, որպեսզի ազատագրի Կիլիկիան: Հայ գործիչները պատասխանեցին, որ հայերն ուրախությամբ կարձագանքեն կամավորագրությանը, եթե նրանց դիմի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան, եւ խորհուրդ տվեցին, որ ֆրանսիական կառավարությունը բանակցի անմիջականորեն նրա հետ[52]:

Հոկտեմբերի 2-ին Ֆրանսիայի արտգործնախարարության Արեւելյան գործերի բաժնի պետ Ժան Գուն Փարիզում հանդիպեց Պ. Նուբարի հետ: Գուն տեղեկացրեց, որ Ֆրանսիան որոշել է կազմավորել հայկական լեգեոն, որը լինելու է ֆրանսիական ռազմարշավային զորքերի կորիզը, երբ որոշվի ներխուժել Փոքր Ասիա, կամավորները մարզվելու են Կիպրոսում եւ ղեկավարվելու են ֆրանսիացի սպաների կողմից եւ կղզում մնալու են՝ մինչեւ գործողության պատեհ ժամանակը գար: Նա բացատրեց, որ ռազմական գործողությունները կարող էին տեղի ունենալ երկու դեպքում. եթե Մեքքայի շերիֆ

52 Տե՛ս **Մ. Տամատեան**, Իմ յուշերէս, Պէյրութ, 1985, էջ 105-106:

Հուսեինի ապստամբությունը տարածվեր դեպի հյուսիս եւ ընդգրկեր ամբողջ Սիրիան, կամ՝ եթե դաշնակիցները հաղթեին Բալկաններում, որով կկտրվեին Գերմանիային ու Թուրքիային միացնող հաղորդակցության ուղիները, որը կհանգեցներ վերջինիս մեկուսացմանը եւ հետեւաբար նրա բանակի պարտությանը, որը կտեղափոխվեր Անատոլիա: Նման զարգացումների դեպքում նախատեսվում էր զորքեր ափհանել Կիլիկիայում կամ Սիրիայում: Այդ պայմաններում դաշնակիցները տեղանքին ու լեզվին ծանոթ կամավորների կարիքը կունենային: Գուն խոստանում էր, որ Կիլիկիան գրավելուց հետո տեղի ոստիկանական եւ վարչական պաշտոնները տրվելու էին այդ կամավորներին: Նա Պ. Նուբարի աջակցությունը խնդրեց Եգիպտոսում մոտ 1 000 կամավորներ հավաքագրելու համար, քանի որ կամավորագրվելու պատրաստակամություն հայտնած Պորտ Սայիդի մի քանի հարյուր մուսալեռցիները բավարար չէին:

Նուբարը մտավախություն հայտնեց, որ հայկական առանձին կամավորական զորամասի ստեղծումը թուրքերին նոր ջարդերի առիթ կտար, եւ առաջարկեց հայ կամավորներին չհամախմբել Եգիպտոսում, այլ փոքր խմբերով ուղարկել Կիպրոս եւ մտցնել ֆրանսիական ռազմարշավային զորքերի կազմի մեջ: Նա միաժամանակ պահանջեց Արեւմտյան ճակատում կռվող Արտասահմանյան լեգեոնի հայ կամավորներին նույնպես տեղափոխել Կիպրոս: Գուն համաձայնեց, որ ջարդերի վտանգը կա, եւ հավանություն տվեց Նուբարի առաջարկներին: Վերջում Նուբարը նշեց, որ կամավորագրությունը խրախուսելու համար կարեւոր պայման էր, որ Ֆրանսիան խոստանար ինքնավարություն շնորհել Կիլիկիային: Նա տեղեկացրեց, որ հայերը խոր հիասթափության մեջ էին՝ կապված Ռուսաստանի վարած՝ Արեւմտյան Հայաստանը բռնակցելու ու ռուսաֆիկացման քաղաքականության հետ եւ հույս հայտնեց, որ Ֆրանսիան հնարավորինս ընդարձակ տարածքներ կվերցնի իր հովանու տակ, եւ հավատարիմ մնալով ժողովրդավարական ավանդույթներին՝ Կիլիկիայում կստեղծի այնպիսի վարչաձեւ, որը կհամապատասխանի հայերի ազգային ձգտումներին: Սակայն, երբ Նուբարը հույս հայտնեց, որ Կիլիկիան չի միացվի Սիրիային եւ կլինի առանձին վարչական միավոր, Գուն խուսափոխաբար պատասխանեց, որ դեռեւս վաղ էր որոշել ապագա վարչական բաժանումների սահմանները, եւ վստահեցրեց, որ Ֆրանսիան լիբերալ (ազատական) վարչաձեւ կպարգեւի Կիլիկիային[53]:

Հոկտեմբերի 27-ին Լոնդոնում Նուբարը, Սայքսը, Պիկոն համաձայնության եկան Հայկական լեգեոնի կազմավորման պայմանների շուրջ[54]:

Կիպրոսում 1916 թ. դեկտեմբերից սկսեց կազմավորվել Արեւելյան լեգեոնը, որին կամավորագրվեցին մոտ 5 000 հայ, 600 սիրիացի ու լիբանանցի:

53 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., հ. Ա., էջ 357-358:
54 Տե՛ս *"Boghos Nubar's Papers"*, էջ 393-397:

Լեգեոնը նախատեսվում էր օգտագործել Սիրիայում կամ Կիլիկիայում ափիանման դեպքում: Սակայն Պաղեստինյան ռազմաճակատում բրիտանացիների՝ դեպի հյուսիս առաջխաղացմանը զուգահեռ ֆրանսիական գործիչների մոտ մեծանում էր անհանգստությունը, որ իրենց դաշնակիցը հետագայում կարող է հետ կանգնել Սայքս-Պիկոյի համաձայնագրից եւ Սիրիայի ու հայկական տարածքների կառավարումը վերցնել իր ձեռքը: Ֆրանսիան այդ տարածաշրջանում իրեն ավելի ամուր զգալու համար պետք է զորքեր ունենար, որպիսիք չուներ: Նման պայմաններում նա փորձում էր հենվել հայ եւ սիրիացի կամավորներից կազմավորված զորքերի վրա: Ֆրանսիայի ռազմական նախարարի՝ 1918 թ. մարտի 23-ի թիվ 2177-9/11 հրամանով Արեւելյան լեգեոնը դուրս բերվեց ծովային ուժերի կազմից, դրվեց Պաղեստինի եւ Սիրիայի ֆրանսիական զորախմբի տրամադրության տակ[55]:

1918 թ. մարտի 23-ին՝ Ս. Զատիկի առավոտը, լեգեոնականները պաշտոնապես տեղեկացվեցին, որ մեկնելու են ռազմաճակատ: Ապրիլի վերջին լեգեոնի հայկական 1-ին, իսկ մայիսի 9-ին 2-րդ գումարտակները տեղափոխվեցին Պորտ Սայիդ[56], Կիպրոսում մնաց միայն 3-րդ գումարտակը[57]:

1918 թ. սեպտեմբերի 19-ին հայկական գումարտակը մասնակցեց Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն եւ վճռորոշ՝ Մեգիդդոյի ճակատամարտին՝ Ռաֆաթ-Արարայի տեղամասում: Շարունակելով ռազմերթը՝ Արեւելյան լեգեոնը բրիտանական ուժերի կողքին մասնակցեց Լիբանանի ու Կիլիկիայի ազատագրմանը:

Արեւելյան լեգեոնի երրորդ գումարտակը հոկտեմբերի 1-ին ազատագրեց Բեյրութը[58]: Հոկտեմբերի 7-ին, երբ բրիտանական հետախուզական ուժերը հասան Բեյրութ, պարզեցին, որ այն արդեն ազատագրված է[59]:

Հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն պահանջեց բրիտանական իշխանություններից, որ Ալեքսանդրետի գրավումը կատարվի միայն ֆրանսիական եւ հայկական ստորաբաժանումների միջոցով, քանի որ այդ նավահանգիստը առանձնահատուկ կարեւորություն ուներ Ֆրանսիայի համար[60]: Սիրիայի ֆրանսիական նավատորմի հրամանատար ծովակալ Վարնեյը հոկտեմբերի 15-ին Բեյրութում այդ հարցի շուրջ խորհրդակցեց

55 Տե՛ս **Ա. Գարամանուկեան**, Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ե., Պէյրութ, 1974, էջ 77:

56 Տե՛ս **Ռ. Գասպարյան**, Հայկական լեգեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թ. 1, էջ 8:

57 Տե՛ս **Տ. Պօյաճեան**, Հայկական լէգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ուօթրթաուն, 1965, էջ 94:

58 Տե՛ս **Խ. Աճէմեան**, Էջեր կամաւորի օրագրէս, Պէյրութ, 1967, էջ 132-138:

59 Տե՛ս **H. Gullett**, *The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition)*, Sydney, 1941, էջ 776-777:

60 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., հ. Բ., էջ 402:

դաշնակցային ուժերի գլխավոր հրամանատար, բրիտանական գեներալ Էդմունդ Ալենբիի հետ: Վերջինս տվեց իր համաձայնությունը, որ Ալեքսանդրետը գրավվի ֆրանսիական եւ հայկական զորքերի միջոցով: Հոկտեմբերի 26-ին սպասվում էր, որ ֆրանսիական նավատորմը ափհանում կկատարեր Ալեքսանդրետում: Սակայն թուրքերը նոր համալրումներ ստացան, ականապատեցին Ալեքսանդրետի ծովածոցը եւ հրետանային կրակով հետ մղեցին ֆրանսիական նավատորմին[61]: Միայն նոյեմբերի 10-ին ֆրանսիական նավատորմը գրավեց Ալեքսանդրետը[62]:

Նոյեմբերի 5-ին Ժ. Կլեմանսոն գաղտնի հրահանգ ուղարկեց Սիրիայի ու Պաղեստինի ֆրանսիական զորախմբի հրամանատար Ֆիլիպ դը Պիեպապին, որ Տավրոսը ռազմակալվի Արեւելյան լեգեոնի ուժերով, եւ առաջարկեց այդ ուղղությամբ քայլեր կատարել Ալենբիի համաձայնությունը ստանալու համար: Վարչապետը չէր ցանկանում կառավարական մակարդակով միջամտել, քանի որ ռազմական գործողությունների պատասխանատվությունը Ալենբիի վրա էր դրված, եւ դա կարող էր նրա արժանապատվությունը վիրավորել եւ հակառակ ազդեցությունն ունենալ[63]: Արդեն նոյեմբերի 15-ին գեներալ Համելինը ռազմական նախարարությանը տեղեկացրեց, որ պատրաստվում է Հայկական լեգեոնը տեղափոխել Կիլիկիա՝ Ալեքսանդրետի վրայով Թոփրակ Կալե, Ադանա եւ Տավրոսի լեռներ[64]:

Ֆրանսիացիները միշտ կասկածանքով էին վերաբերվում բրիտանացիներին, ինչպես նաեւ հայերի ազգային զգացումներին: Լեգեոնական Արամ Հովսեփյանը գրում է, որ Ալեքսանդրետում ափ դուրս գալուց հետո ծնկի է եկել, համբուրել հայկական հողը: Դա դուր չի եկել ֆրանսիացի հրամանատարներին, որի համար 15 օր բանտարկել են[65]:

Նոյեմբերի 28-ին դաշնակցային ուժերի գլխավոր շտաբը թուրքական կողմից պահանջեց իրենց հանձնել Կիլիկիայի այն բոլոր տարածքները, որոնք իրենց համար ռազմական արժեք ունեն եւ իրենց անվտանգությունն են երաշխավորում: Դաշնակիցները պետք է գրավեին Ադանայի նահանգը ըստ հետեւյալ ժամանակացույցի.

ա) դեկտեմբերի 13-ին՝ Ջիհան գետից արեւելք գտնվող տարածքները,

բ) դեկտեմբերի 17-ին՝ Սիհուն գետից արեւելք եւ Ադանա-Տարսոն գծից հարավ ընկած հողամասերը,

գ) դեկտեմբերի 21-ին՝ արեւմուտքում մինչեւ Պոզանտ ընկած տարածքները: Դեկտեմբերի 21-ից հետո վերոնշյալ սահմաններից ներս գտնվող բո-

61 Տե՛ս **W. Massey**, *Allenby's final triumph,* London, 1920, էջ 302-303:

62 Տե՛ս **Վ. Քիւրքճեան**, Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 5:

63 Տե՛ս **Ա. Պեյլերյան**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 422-423:

64 **Տ. Պօյաճեան**, նշվ. աշխ., էջ 178:

65 «Արարայ» (նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին), հրատարակութիւն Հայ լեգէոնական միութեան, Պոսթոն, 1923, էջ 30:

լոր թուրք զինվորները եւ սպաները գերվելու էին, իսկ զենքը եւ զինամթերքը բռնագրավվելու էր[66]:

Այսպիսով՝ ֆրանսիական ուժերը, որոնց կորիզը Արեւելյան լեգեոնն էր, 1918 թ. վերջին ազատագրեցին Կիլիկիան: Մարաշը, Այնթապը, Քիլիսը, Բիրեջիկը, Ուրֆան գրավվեցին բրիտանական զորքերի կողմից, եւ միայն 1919 թ. հոկտեմբերի վերջին ֆրանսիական զորքերը եւ Հայկական լեգեոնի զինվորները փոխարինեցին նրանց:

1918 թ. դեկտեմբերի 25-ին գնդապետ Բրեմոնը նշանակվեց *«Հայաստանի եւ Կիլիկիայի կառավարիչ»:* Սակայն 1919 թ. հունվարի 19-ին նրա պաշտոնը վերանվանվեց՝ *«գրավված թշնամի հողամասերի հյուսիսային գոտու գլխավոր կառավարիչ»*[67]:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի տարիներին Կիլիկիան հայտնվեց Ֆրանսիայի հավակնությունների մեջ: Ֆրանսիացիները իրենց ձգտումներն ապահովեցին ոչ միայն միջդաշնակցային պայմանագրերով, այլեւ թույլ չտվեցին դաշնակցային զորքերին՝ գրավել այդ երկրամասը՝ առանց իրենց մասնակցության: 1918 թ. վերջին ֆրանսիական դրոշի տակ կռվող Արեւելյան լեգեոնի հայկական գումարտակներն էին, որ ազատագրեցին Կիլիկիան: Սակայն այդ երկրամասում շուրջ երեք տարի հաստատվելուց հետո ֆրանսիացիները, միջազգային հանգամանքների փոփոխության հետեւանքով, ի վերջո, որոշեցին այն վերադարձնել թուրքերին:

66 Տե՛ս **E. Bremond**, *La Cilicie en 1919-1920,* Paris, 1921, էջ 6:
67 Տե՛ս **Տ. Պոյաճեան**, նշվ. աշխ., էջ 199:

РЕЗЮМЕ

Державы Антанты обсуждали проблему раздела Османской империи в годы Первой мировой войны. У них были разногласия относительно Киликии. Великобритания, Россия легко отказались от Киликии в пользу Франции. Острыми были разногласия между Францией и Италией. Наконец Франция смогла заставить всех союзников признать свои права над этой армянской территорией. Во время войны французы создавали препятствия против десантирования союзников в Киликии, потому что они не были уверены, что союзники вернут эту территорию, захватив ее без французских войск. Не имея достаточных войск на Востоке, Франция инициировала формирование Восточного легиона из армянских и сирийских добровольцев. Легион под французским флагом участвовал в освобождении Палестины, Ливана, Сирии и Киликии.

SUMMARY

The Entente states during First World War were discussing the problem of dividing Ottoman Empire. They had controversies about possesion of Cilicia. Great Britain and Russia easily abandon from Cilicia in favor of France. There was an acute debate between France and Italy. At last France could force all Allies to recognize his rights over that Armenian land. During the war the Frenches created obstacles against Allies landing projects in Cilicia, because they were not sure that Allies would yield it capturing without French forces. Not having enough troops in the East France initiated formation of Eastern legion from Armenian and Syrian volunteers. That detachment under French flag had part in liberation of Palestine, Lebanon, Syria, and Cilicia.